

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

20.09.2014

Հարգելի հայրենակիցներ

Հայոց հայրենիքի անկախության ու ազատության նվաճումը մեր նախնիների դարավոր, սրբազան երազանքն էր, որը ծանր պայքարով ու հրաշքով իրականացրեց մեր ժամանակների սերունդը՝ խիզախորեն դնելով անկախ պետականության հիմքերը: Եվ այդ հիմքերի վրա, որն ամրագրվեց նաև ռազմական հաղթանակներով, անցած 23 տարիների ընթացքում վեր բարձրացավ տարեցտարի զորացող ու զարգացող, միջազգային իրավունքի լիիրավ անդամ Հայաստանի Հանրապետությունը՝ համայն հայության միակ ու սրբազան հայրենիքը:

Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ շնորհավորում եմ Հայաստանի, Արցախի եւ Մփյուռքի մեր հայրենակիցներին, մաղթում խաղաղություն, առողջություն, ապահով ու արարչագործ գործությամբ բռնկված կյանք, համահայկական իղձերի իրականացում:

Եղեք միշտ երջանիկ ու միաբան:

Լավագույն ցանկություններով՝ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան